



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյութը ցանկացած ձևացափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4/13.

1a

Մ Ա Ր Ա



# ՆԱՍՅԱՆ



Հայութակյուրյուն. — Թերեվան, 1929

Պի

Են  
Կրնու-

Օ Ա Ր Ա

ՆԱՍՅԱՆ

A 8678



Պետական Հրատարակություն. — Թերելիան, 1929

Հր. № 1099: Գրասեղվոր № 771 (ր): Տիրաժ 2000:  
Պետրառի տուջին տպարան Վազգարշապատում:  
Պատգեր № 163:

## Ն Ա Ս Յ Ե Ա Ն

Գարունը բացվում եր: Դաշտերում  
կանաչ զմբուխտը անուշ հովի հետ փըր-  
փըռում եր մեղմիկ: Հալ ընկած ձյունից  
վաղող Ըթերը քաղցր կարկաչով իջնում  
ելին բարձր լեռներից ու փովում դեպի  
մարմանդները:

Հեռավոր դաշտում նրանց կարկաչից  
վաղուց արթնացած կարմիր կակաչը  
կոկոնի միջից լուռ, գաղտազողի նա-  
յում եր շուրջը, նայում ու ժպտում:  
Իսկ դաշտի ծալրին, գյուղի ցածրիկ  
խրճիթում վաղ առավոտից աղմուկ եր  
տիրում:

— Պանդիստությունը քեզ և վիճակ-  
վեց, — ասում եր մալրս արցունքն աշ-

քերին։ Փոքրիկ բուլըերս նիհար ու դեղնած, ինչպես անարե գունատ ծաղիկներ, փարփում ելին ինձ։

— Մի վախիլ, մայրիկ, հո մենակ մենք չենք, — ասացի նրան՝ սիրտ տալու համար։

— Հա, մենակ մենք չենք, հենց բոնն ել այդ ե, — ասավ նա խորը հառաջանքով։

— Սելլ պատրաստ ե, — ձայն տվեց դրսից մեր հարեան ծերուկ Մացակը։

— Կարս ջան, ախալերս, քո հոգուն մեռնեմ, այս նամակն անձամբ տար Արաեմին և ասա, վոր ել չեմ կարող, ել չեմ դիմանալ։ Հարամ լեզավ մեզ նրա վտառակը, ջահել որս սեացավ սե հարկի տակին, աչքս ջուր դարձավ նայելով ճամբին, — ասաց Մացակի հարս կուսնթագը, ամուսնուն գրած նամակն ինձ՝ տալով։ Ապա, կարծես ինքն իրան խոսելով՝ ավելացրեց.

— Գեղում մարդ չմնաց, գնում են,  
հա գնում... Այս, եղ սև հորերը ինչ-  
քան ջահելի որ սևացըին:

— Սևանալու պես սևացըին... սրա  
հերն ել գնաց ու հետ չդարձավ: Ե՛, աշ-  
խարհ, աշխարհ:

Թեև լի հուկսերով եյի դիմում քա-  
ղաք՝ բախտ վորոնելու, բայց նրանց  
լացը ճմլում եր սիրտս:

Շտապ մնաք բարե ասելով՝ նստեցի  
կալարան մեկնող սալլը: Տանեցիք և  
հարեանները լերկար ժամանակ նայում  
եյին մեր յետեից:

Յերբ նրանք չքացան աչքիցս, մտքե-  
րիս հետ մենակ մնալով, հիշեցի հորս,  
վորին ճիշտ այսպես ճանապարհ դրինք,  
հիշեցի մեր գյուղից շատերին, վորոնք  
լերկար տարիներ՝ թողած ես սիրուն  
կանաչ դաշտերը, կին ու յերեխա, աշ-  
խատում ելին Բագվի նավթահորերում:

Ո՞ի մութ կասկած ընկավ սիրտս:

«Միթե յես ել շատերի նման յերկոր  
ժամանակ, դուցե և ընդմիջա չեմ տես-  
նելու մեր ես յերկրի ծաղկած դարու-  
նը»—մտածեցի յես, և ականջիս հնչեցին  
մորս վերջին բառերը՝ «Բայց ինչու,  
ինչու»:

## II

Բալախանում գտա Արտեմին, Լուսըն-  
թագի ամուսնուն: Շատ չանցած՝ հենց  
նրա միջոցով իրրե արհեստավոր շուտ  
դործի մտած և առաջին աննշան վաս-  
տակս տուն ուղարկեցի:

Նորեկ ելի, անծանոթ, քաշվող: Գոր-  
ծից աղատ ժամերին միայնակ նստած  
հիշում ելի մորս, քուլրերիս, կորցրած  
հորս, ապա հիշում մեր ձյունապատ  
բարձր սարերը, զմբուխտ դաշտերը և  
կարծես լսում ելի կովերի բառաչը, հով-  
փի շնուն, ու միտքս ոլանում եր դեպի  
հեռուն, զեղի տուն: Բայց մեկ ել հան-

կարծ սթափվում ելի սլացող կտոքից,  
սուլիչի ձախից, դործտաերերի բիբտ  
հոլովանքից. տեսնում նավթահորերում  
կյանք մաշող, մրուփած բանվորներին,  
վորոնք բոլորը, թողած ինձ նման տուն  
ու ընտանիք, ոև հացի համար մուր  
ելին շնչում. Այդ բոպելին կրկին ու կըը-  
կին յես հիշում ելի.

-- Բայց ինչու, ինչու...

Արտեմը նկատում էր իմ թախիծը:

— Աղա, Կարոն, հարզուրի կեսը հիսուն  
ե, ի՞նչ ես եղքան մտածում, — ասաց  
նա մի որ՝ ձեռն ուսիս դնելով:

Բաց արի լցված սիրաս նրա առաջ:  
Նա լսեց, լսեց, ապա մի զննող հա-  
յացքով նաևեց ինձ, և «Ե՛ բալամ, — ա-  
սավ, — դեռ ինչը գիտես: Սպասիր, դեռ  
շատ բան կտեսնես»:

Այսուհետեւ աշխատանքից ազատ ժա-  
մանակ լերբեմն տանում էր ինձ քա-  
ղաք, ցույց տալիս հոլոկաստ տներ, ա-

մեն բարիքով լիքը խանութներ, կառք,  
վոսկի, մետաքս ու կամաց շշնջում.

— Այս բոլորը «նրանց» համար ե,  
նրանց... բայց սա գեռ բոլորը չե,  
որանք վոչինչ են նրանց համար։ Հա-  
րուսաներն իրենց կլանքի մեծ մասն  
անց են կացնում արտասահմանում,  
վորեղ զործատերը մի զիշերվա մեջ  
խնճույքի համար այնքան ե ծախսում,  
վորքան հազար բանվոր մի ամսում չեն  
կարող ստանալ նրանից՝ իրենց աշխա-  
տանքի համար։

Ամեն անգամ, խոսակցության վեր-  
ջում Արտեմը հեղնանքով ավելաց-  
նում եր.

— Հիմա հասկացար՝ ինչու չպետք է  
տեսնենք մենք մեր սարերը, ինչու  
լուսնթագը պիտի սևացնե իր ջահելորը։

Լցվում եր սիրտս բուռն զայրութով։

— Բայց ինչու յե ալդպես, միթե

ճար չկա այդ անգութների խիղճը շարժելու, — ասում ելի լես:

— Խիղճը շարժելու, ում, գաղանների: ԶԵ, այդ չի լինի. վոսկին ու խիղճը իրար չեն սիրում, ուրիշ բան եպետք:

— Վհրն ե այդ ուրիշը, — հարցնում ելի հետաքրքրությամբ:

— Կաց, մի շտապիր, այդ ել կիմանաս, — ասում եր նա ինձ ամեն անգամ:

Ամիսներն անցան, նա բերեց տպած մի փոքր թերթիկ և գաղտնի տալով ինձ, ասաց.

— Կարդա և վերադարձրու, սա քեզ պես շատերին ե պետք դեռ:

Ցեվ իրոք, նա շատ հնացած եր: Հստյերեռլթին շատերի ձեռքն եր անցել:

Կարդացի, այն ել մի քանի անգամ. այնտեղ կարծես դիտմամբ գրի ելին առել այն ամենը, ինչ կատարվում եր իմ սրտում:

Այն թերթիկները կամաց կամաց կարծես բաց արին աչքերու... թվում եր, թե արգեն զանում եմ «ինչուների» լուծման ճամբան:

Զարմանում ելի, թե Արտեմը վնրանդից ե զանում այդ «թերթիկները», և ինպրում ելի ցուց տալ նրանց տեղը.

— Այս, — ասում ելի, — այն ժամանակ գիշեր ու ցերեկ կկարդամ այդ թերթիկները, կկարդամ բոլորը, վոր զբանեմ իմ փնտռած ուղին:

Բարեկամս ժողիտը գեմքին լսում երինձ, և նրա ժողիտն որըստորե փոխվում եր ուրախության:

Մի որ, մութն ընկնելուն պես, նախնձ տարավի ինչ վոր հեռու մի գործարան:

— Այստեղ կծանոթացնեմ քեզ մի աղջկա հետ, վորը կտա քեզ քո բոլոր հարցերի պատասխանը, և կարդալու շատ բան, — ասաց նա ճանապարհին:

Ուրախությանս չափը չկար:

Հասնելով գործարանին՝ ներս մտանք  
ծառալողներից մեկի սենյակը, վորտեղ  
սեղանի առաջ կռացած՝ աշխատում եր  
մի նիհար, զունատ աղջիկ։ Մեզ տես-  
նելով՝ նա ցած թողեց կարը և ուրախ  
ժպիտով ասաց։

— Վերջապես յեկաք...

— Այս, — պատասխանեց բանվորը, —  
բայց վոչ մենակ, տես, բերել եմ այն  
յերիտասարդին, վորի մասին արդեն  
խոսել եմ քեզ հետ. հուսով եմ՝ բոլոր  
հանձնարարություններդ ինձանից լավ  
կկատարե... յերաշխավորում եմ։

Այս բառերը լցրին սիրտս անհուն  
շնորհակալությամբ։ Կարմրեցի, սիրտս  
բաբախեց. թվաց, թե մի անասելի փառ-  
քի յեմ հասել...

Փոքրիկ Բերտան, այդպես եր նրա  
անունը, մեկնեց ինձ իր ձեռքը, վորը  
ուժգին սեղմեցի։

Ալժմ ունելի մի լերկրորդ ընկեր ևս,  
վոր վոչ միայն չեր ձանձրանում իմ  
անվերջ հարցերին պատասխանելուց,  
այլ և ինքն եր առիթ տալիս իմ մեջ  
նորանոր հարցեր ծագելուն:

Ալժմ ինձ համար որերը թոշում  
ելին աննկատ: Դադարել ելի մորս և  
քույրերիս մասին մտածելուց և բավա-  
կանանում ելի միայն ստացածս կողեկ-  
ները նրանց ուղարկելով:

— Մենք պետք ե մտածենք բոլոր  
մայրերի և քույրերի մասին, — ասում եր  
Բերտան:

Այն փոքրիկ աշխատավորուհին, վոր  
անսպառ լեռանդ ուներ, ճիշտ վոր  
մտածում եր ամենքի մասին, բացի  
իրենից: Ամբողջ որն աշխատելով քա-  
ղաքի արհեստանոցի խեղզող մթնոլոր-  
տում, լերբեք չեր մոռանում և հեղա-  
փոխական աշխատանքը ու ամեն լերե-  
կո գնում եր դեպի գործարանները՝

թոռւցիկներ տարածելու և ինձ նման  
հում նյութերից հին կանքը խորտակող  
քլունգներ պատրաստելու:

Մեր հաճախակի տեսակցություններին վոչ վոք առանձին կարևորություն  
չեր տալիս:

— Զահելներ են... — ասում եցին  
շատերը:

Մեր բարեկամությունը գնալով խո-  
րանում եր, բայց վոչ այն ուղղությամբ,  
ինչ կարծում ելին մեզ տեսնողները:  
Մեզ կապում եր այն ընդհանուր գոր-  
ծը, վոր յերկուսիս սրտին ել չափա-  
զանց մոտ եր:

Հիացած Բերտալի անսպառ յեռան-  
դով՝ հաճախ չելի ծածկում նրանից իմ  
բարի նախանձը:

Նա միշտ ժպտում եր նման դեպքե-  
րում:

— Մեր արածն ինչ ե վոր... ապա մի  
տեսնես նաստյալին... ո, նա ուրիշ

կըակ եւ այ, թե ում պետք ենախանձել: — Յեվ պատմում եր նրա կյանքից հետաքրքիր գեղքեր:

— Նասալան զիաե զբավել ամենաքար սրտերը ապազալի վառ հեռանկարներով:

Քիչ ել սապասիր, քեզ կծանոթացնեմ նրա հետ, գուշ կարող ես և այնտեղ սպատակար լինել, — ասում եր Բերտան: Յեվ յես յերազում եիի այդ որը:

### III

Հետապնդող աչքերից խուսափելու համար՝ ընկերներիս առաջարկությամբ, յես այժմ աշխատում եիի քաղաքի գործարաններից մեկում:

Գիշեր եր, այն գիշերներից մեկը, յերբ արհեստավորը տուն է դառնում ջարդված ու հոգնած և ուզում է քնել: Նոր եիի պառկել, յերբ պատուհանիս տակ մի ձայն լսեցի: Լարեցի լսողու-

թլունս. դա մեր պայմանական «հազն» եր:

«Մերոնցից են, բայց ի՞նչ կա» հարց  
տվի ինքս ինձ, բանալով լուսամուտը:

Այդ բռպելին յերկու ստվերներ ան-  
ցան լուսամուտիս տակով: Մի բան  
թեթևակի դիպավ յերեսիս և ընկավ հա-  
տակին: Դա թղթի կտոր եր: Կուցա  
վերցրի և մոտեցնելով ճրագին, կար-  
դացի:

«Սպասում ենք փողոցի անկյունում»:

Ստորագրություն չկար և պետք ել  
չեր: ճանաչեցի, դա Բերտամի դիրն եր:  
փակեցի լուսամուտը և ապա ճրագի  
վրա ալրելով թղթի կտորը, դուրս յեկա:

Ճիշտ մատնանշված տեղում կանգ-  
նած ելին ստվերները: Նրանցից մեկն  
ինձ նկատելով հեռացավ: Մյուսը գըլ-  
խին շալ զցած մի կին եր: Նա ինձ ճա-  
նաչեց և մոտենալով թեանցուկ արագի  
Զգարմացա, դա ևս մեր ընդունված

ձեերից եր։ Վոստիկանության աշքից  
խուսափելու համար՝ մենք պետք ե կեղ-  
ծելինք մեր վողջ ելությունը և հար-  
բոծ, գիշերային թափառաշրջիկի տեսք  
ընդունելինք... Մկզբում խիստ վիրա-  
վորական եր թվում ինձ, բայց հետո  
հաշտվեցի։

Նաստյային Գ.ից կանչել են. նա  
պետք ե վաղը մեկնե ալստեղից. իրեն  
դեռ հայտնի չե, — անավ շշնջալով Բեր-  
տան. — անհրաժեշտ ե խսկույն իմաց  
տալ, քանի դեռ չի զնացել իր սատա-  
նայական անկյունը թագնվելու։ Մըշ-  
տական ուղեկիցս այսոր զբաղված եր,  
և յես վորոշեցի քեզ վերցնել։

«Մշտական ուղեկիցս»... ուրեմն սա  
հս միշտ գնում ե «այնտեղ»... և ինչ-  
պես թաքցրել ե ինձանից... «մի՛թե  
դեռևս այդքան վստահություն չեմ ներ-  
շնչել» — մտածեցի փոքր ինչ վիրավոր-  
ված. սակայն լոեցի նաստյային տես-

նելու ուրախությունից:

Բերտան շալի տակից համեմ զինվորական վերաբերու և գլխարկը Յես անմիջապես հագաւ:

— Վորտեղ են նրանք, — հարցրի յես:

— Յերբ համեմնք, կտեսնես, — պատասխանեց նա կարճ ու կտրուկ: Ապա մեկնելով ինձ մի փոքր շիշ ողի, ասաց:

— Այս դիր զբանդ և յեթե պետք լինի, կոտրելով շախ գլուխը «խմիր» և ինձ «կխմացնես»...


Յես հասկացաւ: Մենք առաջ գնացինք:

Փողոցներն ամալի ելին: Գիշերալին լոռության մեջ լսվում եր ծովի ալիքների խուլ վոռնոցը, փողոցների անկյուններում կանգնած քնկոտ վոստիկանների յերբեմնակի սուլոցը կարծես ձախակցում եր նրան:

Տների ճակատներից կախված փոքրիկ

15-80/1

A 86/2



լապտերները կեղոստ ապակիների յետեից հազիվ ելին լուսավորում մայթերը:

Խորասուղված մտքերիս մեջ՝ չնկատեցի մեր անցած ճանապարհը, մինչև վերջապես կանգ առանք ինձ համար միանգամայն անծանոթ փողոցի խարխուլ տներից մեկի առաջ։ Բերտան զգուշությամբ մոտեցավ տանը, ապա կռանալով դեպի ներքնահարկի լուսամուտներից մեկը, ականջը դեմ արավ։

— Այստեղ են, — ասաց ու սհագացաւ։

Շատ չանցած՝ մեր առաջը բացվեց մի ցած, նեղիկ դուռ։ Բերտան ինձ համար անհասկանալի մի քանի բառ փոխանակեց դուռը բայց անողի հետ, և մենք ներս մտանք։

Մախորկայի անախորժ ծխովլ լցված մի նկուղ եր դա՛ցածը առաստաղով, խոնավ, բորբոսնած պատերով և հողե հատակով։ Նրա մի կողմում հին, կեղ-

առաջ լրագրի վրա թափված ելին խողի  
ճարպի, ապիստած ձկան և թթու վա-  
րունգի կտորներ, ոև հացի պատառներ,  
2-3 դինու և ողու շշեր, վորոնցից  
թափված հեղուկը ներկել եր լրագիրն  
ու հացի կտորները:

Մեղանի շուրջը բոլորել ելին մի քանի  
զինվորներ: Նրանք զանազան դիրքերով  
թինկ ելին տվել մերկ պատերին: Քիչ  
հեռու, ցածր նստարանի վրա նստած  
եր Նաստլան՝ արմունկները ծնկներին  
և սեղմած զույգ բոռնցըներն այտե-  
րին հենած:

Մեր հայտնվելը շփոթություն առա-  
ջացրեց ներսում: Թեր ընկած զինվոր-  
ները մեզ տեսնելով՝ անհանգստությամբ  
շարժվեցին տեղերում: սակայն Նաս-  
տլալի անխռով տեսքը և անշարժ դիրքը  
հանգստացրեց բոլորին:

— Բարի լեռեկո, ընկերներ.—ասաց  
Բերտան, և մոտենալով Նաստլալին՝

կամացուկ, մի քանի խոսքով բացատրեց մեր գալու նպատակը, վորից հետո մենք ևս տեղափորվեցինք զինվորների մոտ:

Այդ լուրը Նաստյալին մի քանի ըստելուր մտածմունքի մեջ զցեց. բայց շատ չանցած՝ նա կարծես սթափվեց և շարունակեց ըստ լեռեռութին կիսատ թողած զրուցը:

Փոքրիկ լավտերը, վոր դրված եր հատակին, ծխի թանձը քուլաների միջից հազիվ եր լուսավորում ներկա լեզողների մոալլ դեմքերը:

Յես ավելի շատ դիտում ելի Նաստյալին:

Նա հաղթանգամ եր և ըստ լեռեռութին բարձրահասակ: Գեղեցիկ, վոքը ինչ առնական դիմագծերն արտահայտում ելին հաստատուն կամք և վճռականություն: Սանրի տակից դուրս թափված վոչ շատ լեռկար խարտիաշ

մաղերն անփուլթ կերպով փուփել ելին  
ուսերին և լայն, դուրս ցցված ճակա-  
տին, վորի տակից փայլում ելին յեր-  
կար արտեանունքների ցանցով պատաժ  
խոշոր, ժպառն աչքերը:

Նրա բարակ շրթունքների արանքից  
ախորժ ձայնով հորդում ելին կրակոտ  
խոսքեր, վորոնց ալիքները զարնվում  
ելին ներկա յեղողների սրտերին և  
խոռվում նրանց հանգիստը:

Խոսելու ընթացքում նա յերբեմն  
կանգ եր առնում, ձեռով շփում ճա-  
կատը և, մի զննական հայացք ձգելով  
ունկնդիրների վրա, կարծես խորասուդ-  
վում եր նրանց հոգու խորքը: Ապա  
հախուռն մտքերի նորանոր ալիքները  
դուրս ելին ժալթքում սիրուն բերանից:

Նաստալի լուրաքանչյուր բառից  
ցնցվում ելին զինվորները. փոխվում  
եր նրանց դեմքի արտահայտությունը:  
Նրանց անթարթ աչքերի մեջ այժմ

մերթ արցունքն եր փայլում, մերթ  
վրեժի բոցը:

Ուշ եր: Նաստան գրպանից հանե-  
լով պողպատե մեծ ժամացուցը, նա-  
յեց ու յեզրափակեց.

— Այս, նրանք ձեզ բթացնելով՝  
քշում են սպանդանոց, անպատճե կեր-  
պով արատավորում ձեր կանանց պա-  
տիվը և վերջապես նրանք չնչին գնով  
խլում են նաև ձեր նորածին մանուկ-  
ների բերանից հարազատ մոր կաթը՝  
իրենց յերեխաներին կերակրելու հա-  
մար... կարիքից ստիպված զինվորի  
կինն իր ստինքով կերակրում ե հա-  
րուստի այն զավակին, վորն այսոր ծը-  
ծում ե նրա կաթը, վորպեսզի վաղը  
գործարանում ծծե նրա զավակի ար-  
յունը...

— Յեվ դուք, — թունոտ հեզնանքով  
ավելացրեց նա, — դուք այս բոլորը հա-  
մարում եք ճա-կա-տա-զի՞ր... Սակայն,

հարցրել եք յերբեկիցե, թե ով ե գրում  
այդ սե զըերը ձեր ճակատին և ինչու...

Նա լոեց, բայց սրտերն արդեն խալթ-  
ված ելին...

Շատերի բերանից լսվեց անդոր բա-  
ռաչ, վորն իսկույն փոխվեց վրեժով  
լցված խուլ մոնչյունի...

— Ուշ ե, — ասաց Նաստյան, կոճկե-  
լով մոխրագույն հասարակ զգեստի կի-  
սաբաց ոձիքը, — պետք ե ցրվել:

Զինվորները դեռ չելին սթափվել:  
Նրանք կարծես գտնվում ելին մի յե-  
րազի մեջ, ուր հազարավոր գաղաններ  
շրջապատել ելին նրանց՝ պատառութե-  
լու: Ատամներն ու բոռնցքները սղմած՝  
մռալ դեմքով կարծես պատրաստվում  
ելին կովի մանելու:

— Ցեղը ենք կրկին հավաքվելու, —  
վերջապես հարցրեց մեկը:

— Այդ մասին կհայտնվի: Համենայն  
դեպս յերկու շաբաթից վոչ շուտ, — պա-  
տասիանեց Նաստյան:

— Յերկու շաբաթից, — անբավականությամբ հարցրին մի քանիսը:

Այժմ նրանց սիրտը լիքն եր. մոռացել ելին յերկուղ ու վախ:

Թվում եր, թե անթիվ «ինչու» ների շարանը դարթնել եր և նրանց մեջ, ու անհուն կարոտով նրանք ել ինձ նման փնտռում են այդ հարցերը լուծելու ճամբան:

Բատ յերկութին Նաստյան դոհ եր: Նա հեղ ու ժպտադեմ դարձավ բօլորին և շշնջաց.

— Ուզմեմ եք շուտ լինի, զգութ, շատ զգութ ձեր լսածները հետղիետեպատմեցեք ձեր ընկերներին...

Ժամանակ եր ցրվելու, և մենք հատակի վրա թողնելով «ընթրիքի» մնացորդները, դուրս յեկանք նկուղից: Նաստյան դեռ չեր վերջացրել իր անելիքը. նրան վիճակված եր նաև ուղեկ-

յել իր «հյուրերին» մինչև վորեե ապահով անկյուն։

Յեվ նա հանելով գրպանից ծխախոտի փաթեթի կարմրագույն մի թուղթ, շրթունքներն ու այտերը ներկեց նրանով, հանգցըց ճրադը, թեթևակի փակեց դուռը և թևանցուկ անելով յերկու զինվորի, կիսահարբած ձևանալով՝ առաջ ընկալվ… Յերկու հոգի ևս հետեւցին նրանց։

Բերտան և յես Յ զինվորի հետ գնացինք այլ ուղղությամբ։

Հասցնելով մեր ուղեկիցներին նշանակված վալրը, մենք վերադարձանք իմ սենյակս։

— Վորքան լուվ եր հարմարեցըրած ալդ նկուղը, ներս մտնողը կարող եր մտածել, թե դա իրոք կասկածելի վարք ունեցող մի կնոջ անկյուն ե…

— Բայց ասա տեսնեմ, չի՞ պատահում, վոր ալդ անծանոթ մարդկանց

հետ փողոցով՝ անցնելիս վորեւ անախորժություն պատահի...

— Ի՞նչու չե, — պատասխանեց Բերտան, նայելով աննախանձելի անկողնուա:

— Անցյալ որը յերեկոյան միասին գնում ելինք: Իր հաստ շալի տակ նա տանում եր թռուցիկների փոքրիկ կապոցներ: Մենք նկատեցինք, վոր փողոցում կանգնած վոստիկանը խիստ կասկածով ենայում մեզ: Յես քայլերս դանդաղեցրի: Նաստյան առաջ ընկավ: Վոստիկանը, վորը հաճախ տեսել եր նրան «հարբած» զինվորների հետ, ցանկացավ մոտենալ: Զայրութից քիչ եր մնում լաց լինելի յես: Բայց նաստյան, վոր նույնպես գուշակեց նրա միտքը, որորվելով արագությամբ գնաց դեպի նաև այնպես հրեց կողքից, վոր նաև նախքան ընկնելը մի պտույտ յեկավ կանգնած տեղը: Թշվա-

ուականն ուշքի չեր յեկել, Նաստյան  
անհայտացավ: Յես հազիվ ելի դսպում  
ծիծաղս:

— Նա շատ ուժեղ ե, հոտառու և ճար-  
պիկ, — շարունակեց Բերտան: — Անցյալ  
տարի մի գործ կատարեց, վորից հետո  
հերոսացավ իմ աչքում:

Մեր քունը չեր տանում: Յես խընդ-  
րեցի, վոր պատմի: Սկզբում Բերտան  
դժվարանում եր, կարծես չեր վստա-  
հում, բայց հետո զիջեց:

— Անցյալ տարի այստեղ մի հայտ-  
նի լրտես կար, — սկսեց նա, — վորը  
քար ու քանդ արավ մի քանի կազմա-  
կերպություն: Վոչ մի կերպ չեցինք  
կարողանում ազատվել նրանից. ուղ-  
ղակի պատուհաս եր: Մեր աշխատան-  
քը կիսով չափ կանգ եր առել:

— Յեթե իմոնցից մեկն անգամ  
ձերբակալվի, վոչ միայն բոլոր անմեղ  
զինվորներս կկախվեն, այլ և սրիկա-

ներն այնպիսի մի սարսափ կտարածեն զորանոցներում, վոր յերկար ժամանակով ամեն ինչ կմեռնի...—ասավ Նաստյան ինձ մի անդամ և այնուհետեւ բավական ժամանակ անհայտացավ:

Նրանեւ անհայտացավ և այն լրտեսը:

Մենք զարմացած եյինք մնացել: Մեզ թվում եր յերբեմն, թե Նաստյան բանտարկված ե, բայց վոչ մի հաստատքան իմանալ չելինք կարողանում: Նույնիսկ վորոշ կասկածներ ծաղեցին:

Կարճ ժամանակից լուր տարածվեց, թե լրտեսն սպանված եւ: Սկզբում չհավատացինք: Դաղտնի վոստիկանությունը հաճախ եր նման խաղեր սարքում հեղափոխականներին դուրս քաշելու նպատակով: Սակայն հետո մեր ունեցած հավաստի աղբյուրներից իմացանք, վորդա ճիշտ եւ:

— Բայց ի՞նչպես եր յեղել այդ,— անհամբերությամբ հարցը յես:

—Ահա այսպես, — շարունակեց Բերտան. — յերբ Նաստիան նկատում է, վոր լրտեսն արդեն բավական բան զիտելի ենց մասին, միայն ուզում է անձնավորություններին մոտիկից ճանաչել և «չարիքն արմատից պոկել», այդ մասին Նաստիան հայտնում է իր զինվորներից մեկին, վորն արդեն յերկար ժամանակ մեզ հետ կապ ուներ և բավականաշափ ապացուցել եր իր հավատարմությունը:

Խորհրդակցելով նրա հետ, վորոշում են մոտենալ լրտեսին, «Ճանոթանալ» հետը և հրավիրել իրենց յերեկոներին... Լրտեսն այդ ժամանակ զինվորի զգեստ եր կրում, մերոնց աշքին կասկածելի չդառնալու համար։ Այդպիսով մի յերեկո լրտեսին հրավիրում են, սակայն նշանակված ժամին «Թլուրիմացությամբ» ժողովը չի կայանում... զալիս են միայն Նաստիան և իր ընկերը։ Այդ

զիշերը դրանք բարեկամանում են...  
Նաստյալի գեղեցկությունն ևս լրտեսի  
աչքից չի վրխպում, նա ցանկանում է  
միաժամանակ յերկու վորս խփել...  
Նաստյան նկատելով այդ, արամադրու-  
թյուն ե ցուց տալիս և ժամադիր լի-  
նում «ընկերոջից» գաղտնի, քաղաքից  
դուրս ինչ-վոր ամայի տեղում...

Պայմանական ժամին նշանակված  
տեղն ե գալիս մեր զինվորը Նաստյալի  
զգեստով՝ շալը գլխին, և... մինչև կա-  
նաչ քեռին զգուշության համար հա-  
մենայն գեպս մի ձեռքը դրած թրի կո-  
թին՝ մյուս ձեռքով ուզում ե մթու-  
թյան մեջ զրկել «Նաստյալին», մեր  
զինվորը թունավոր դանակով պատռում  
և նրա փորը և անհետանում, թողնե-  
լով տեղում պոռնիկ կնոջ զգեստներն  
իր բոլոր կասկածելի նշաններով:

— Այս գեպքը պարզվեց, յերբ Նաս-  
տյան վերադարձավ, — շարունակեց Բեր-

տան։ Կուսակցությունը ցանկանում  
եր նրան դատել իր անկախ գործու-  
նելության համար, սակայն կատար-  
ված գործն այնքան մեծ եր, վոր հան-  
ցանքն աննշան թվաց։

Այն նկուղը և Բերտալի պատմու-  
թյունները Նաստյալի մասին խիստ  
ազդել ելին վրաս։ Ցեվ մինչ Բերտան  
կամաց-կամաց մեկնվելով կեղտոտ ան-  
կողնի վրա քաղցր քուն մտավ, յես  
նստած՝ յերկար մտածում ելի ու յե-  
րազում աշխատել Նաստյալի հետ։

#### IV

Անցան ամիսներ։ Կատարվեց փա-  
փառ։

Նաստյան մի քանի ընկերների հետ  
իր գաղտնի հեղափոխական աշխա-  
տանքը տանում եր գործարաններում։  
Նրանց գալու որից մեզ շրջապատող  
մթնոլորտն ավելի յեր խտացել։

Իրավունքի և ազատության խռովը  
արդեն հասել եր նավթահորերում աշ-  
խատող հաղարավոր բանվորների ա-  
կանջին, հուղել նրանց սրտերը և գի-  
տակցության բերել։ Արթնացող բան-  
վորության առողջ դատողությունը կեն-  
դանի գործ եր պահանջում։

— Բավական ե, մենք արդեն հաս-  
կացել ենք, — ասում ելին հաղարավոր  
ձախներ։

Սարսափի մեջ ելին տերերը, կառա-  
վարությունը զլուխը կորցրած՝ մաս-  
սայական ձերբակալություններ եր կա-  
տարում։ Սակայն մեկի տեղը ծնվում  
ելին հաղար նորերը՝ ավելի մոլի, ա-  
վելի կատաղի։

Բանտարկված բանվորները հանդիսա-  
չելին մնում նույնիսկ բանտերում։ Նրանք այնտեղ տարածում ելին իրենց  
գայթակղեցնող մտքերը մըուս բանտար-  
կյալների և նույնիսկ բանտի սպասա-  
վորների մեջ։

Այս ու այն կողմից կայծերի նման  
արդեն բռնկում ելին մեծ ու փոքր  
գործադույներ:

Բիրեհելքաթում Շվի գործարանում  
բանվորները գործարանատիրոջից պա-  
հանջում ելին կրծատել աշխատանքի  
ժամերը և ավելացնել իրենց աշխա-  
տավարձը, սակայն տերը լսել անդամ  
չեր ուզում:

Վորոշված եր գործադուլ հայտա-  
բարել:

Նախորոք գաղտնի կերպով հավաք-  
ված եր մի գումար՝ գործադուլավոր-  
ներին ողնելու համար: Գործադուլի  
հարցը միաձայն վորոշելու նպատա-  
կովքանվորական հանրակացարաններից  
մեկում լերեկոյան նշավակված եր վեր-  
ջին ժողովը: Մեծ ջանք գործ գնելով՝  
մեզ հաջողվեց ժողով բերել այն բոլոր  
բանվորներին, վորոնք վախենում ելին  
մասնակցել գործադուլին:

Հանրակացարանը, վորահեղ հազաք-  
վել ելինք, մի ընդտրձակ սրահ եր,  
վորի յերկու կողմում ամբողջ յերկա-  
րությամբ հարմարեցրած ելին յերկհար-  
կանի լախ տախտեր (հարա), վորոնք  
մահճակալի տեղ ելին ծառայում։ Մա-  
հճները միմյանցից բաժանվում ելին  
յերեք մաս լախությամբ՝ նեղ տախ-  
տակով։ Նրանց վրա անկողիններ չկա-  
լին. մի քանիսի վրա նկատվում ելին  
միայն կեղտու ցնցոտիներ, կամ փոքր  
փայտա արկղներ, վորոնք ըստ յե-  
րեռութին պահարանի տեղ ելին ծառա-  
յում։

Սրահի մեջտեղում թողնված եր մի  
անցք՝ հազիվ յերկու քայլ լախությամբ։  
Առաստաղից կախված ելեքտրական  
փոքրիկ լապտերն աղոտ լուսավորում  
եր ծխից և մագութից սևացած պա-  
տերը, վորոնց նախնական գույնն ան-  
կարելի յեր վորոշել։

Բանվորներից մի քանիսը դեռ քնած էլին, Նրանց գեմքերն ու զգեստները նույնպես ու ելին:

Չոր տախտակների վրա, անասելի կեղտի մեջ, այդ թշվառներն անց ելին կացնում իրենց քնի և հանգստի ժամերը...

Վերջապես հնչեց գործարանի սուլիչը:

Քնածները, սովոր այդ ձայնին, վեր թռան տեղերից և տռանց շուրջը նայելու, դիմեցին դեպի աշխատանք: Նրանց կանգնեցրեց դռան մոտ կանգնած բանվորի ձայնը.

— Ժողով ե նշանակված, աշխատանք դեռ չի լինելու... իսկույն կդան մյուսները...

Գործի գնացողները վարանեցին:

— Բայց տուգանքի տակ կզցեն մեզ...

— Եղ դրանց եժան չի նստիլ, — պատասխանեց դռան մոտ կանգնողն սպառնալի ձայնով:

Այդ միջոցին ներս խռովեցին աշխատանքի իրենց հերթը վերջացրած բանվորները:

Նրանց տեսքը հուզիչ էր:

Հոգնած, քաղցած, մրաթաթախ դեմքերի վրա փայլում եցին միայն զույգ անհանգիստ աչքերը: Ընդհանուր սեփու խավարի մեջ դժվար էր տարբերել նրանց դիմագծերը:

Սև ուրվականների նման բարձրանալով կեղաստախտերի վրա՝ ծալապատիկ նստեցին:

Տիրեց մի ընդհանուր լուսւթյուն. վոչ վոք չեր համարձակվում խոսել առաջինը:

Այդ միջոցին, մեր ընկերներից մեկը վեր բարձրացավ: Բոլորի հալացքը դեպի նա ուղղվեց:

—Ընկերներ, —ուժեղ ձայնով գոչեց, — այսոր հավաքվել ենք մենք այս սե հարկի տակ՝ վորոշելու մեր ապագա վիճակը. աղբել ստրուկ, թէ մեռնել աղատ:

Այսուհետեւ նա բանվորին հատու։  
ազդու վոճով նկարագրեց տերերի ան-  
գութ շահագործումը, բանվորի արդի  
վիճակը և ապա կոչ արագ կոխվ մղել  
այդ աղաղակող անարդարության դեմ։  
— Ե՞ւ, մենք այսպես յեկել ենք, այսպես  
ել կերթանք, — նրա վերջացնելուց հետո  
վրա բերագ մի ծերուկ. — աստծու շի-  
նածը մարդը չի քանդիլ…

Բոլորը դարձան նրան։

— Ա՞յս, նա յե, — ասին մի քանիսը։

— Աստծու… Յեթե այդպես ան-  
արդար ե քո աստվածը, մենք նրան  
ել կխորտակենք, — դոչեցին այս ու այն  
կողմից։

Կոիմն սկսվում եր. այժմ խոսում ե-  
մին ամենքը։

Յերկար տևեց վեճը։ Բանվորների  
կրքերն աստիճանաբար բորբոքվեցին։  
Նրանք թշում ելին շիկացած յերկաթի  
պես։

Թվում եր, թե ալս վեճը վերջ չեր  
ունենալու:

Ազդ միջոցին զուռը բացվեց և ներս  
մտավ Նաստյան՝ մի ծերուկ թուրք  
բանվորի հետ, վորը վիրավոր թեր կըրծ-  
քին սեղմած՝ հառաչելով հաղիվ եր  
հետեւում նրան:

Քչերը նկատեցին նորեկներին: Նաս-  
տյան ձեղքելով ամբոխը, առաջ անցավ  
և, հասնելով սրահի վերի ծայրը, բարձր  
կանչեց.

— Ընկերներ:

Կանացի ձախն ոտարոտի թվաց  
ամբոխին, և նա մի վայրկյան լոեց:

— Ընկերներ, — շարունակեց նա,  
ոգավելով ընդհանուր լուսթունից, —  
մեր ժամանակը սուղ ե, դուք հարցը  
լերկարացրել եք:

Ապա առաջ քաշելով թուրք բան-  
վորին, ասաց.

— Նայեք սրան. յերեսուն տարի

առաջ պյուղի աղալարը պարագի տեղ  
վերցրել ե սրա սիրուն կնոջը։ Պարտքը  
վճարելու հույսով յեկել ե զործարան,  
որական աշխատել 18 20 ժամ, ստացել  
միայն յոթ ուուբլի ամսական։ Աշխա-  
տավարձի մեծ մասը կրկին գնացել ե  
տիրոջ գրպանը, իբրև տուգանք այն  
հանցանքների, վորը կարող եր կատա-  
րել 18 ժամ աշխատող հոգնած տար-  
տալշիկը։

Այժմ, յերեսուն տարվա այդ աշխա-  
տանըի հերոսը, իբրև վարձատրություն,  
վնասել ե իր աջ թեր, վորի պատճա-  
ռով աղան արդեն դուրս ե շպրտել  
նրան գործարանից, իբրև մի անպետքա-  
ցած գործիք։ Այժմ չկա նրա կինը,  
վոչ ել հալրենի գյուղը. մւր գնա նա. .  
Միթե նման չե ձեր կյանքը նրա կյան-  
քին, միթե ձեզ բոլորիդ չի սպասում  
այս նույն վախճանը։ Ասացեք, ընկեր-  
ներ, կուզեք ալսպես ապրել։

— Պետք չե այս կյանքը, — գոռացին ամենքը, — այս կյանքը մահից վատթարե...

Ծերուկ բանվորի սրտաճմլիկ, անպաշտան դեմքն ամենքի մեջ արթնացրել եր իր գալիք կյանքի սև ուրվականը և լցըել զայրուցիթի բաժակը:

— Ցեթե այդպես ե, — նորից թնդացնասայան, — թող ձեռք բարձրացնեն նրանք, ովքեր կողմնակից են դործադուլի, վորն այժմ մեր միակ զենքն ե:

Մի ակնթարթում վեր բարձրացան հուժկու բազուկները: Վոչ վոք դեմ չեր:

Կարծես մի մեծ ծանր բան ընկավ բոլորի սրտից: Դադարեց վեճը, խաղաղվեցին կըքերը: Հատուկ հանձնաժողով ընարվեց, վորը պիտի գրավոր ներկայացներ բանվորների պահանջը տերերին, բանակցերնրանց հետ և առհասարակ դեկտվարեր գործադուլը:

— Մեր ոլահանջների մեջ պետք ե

գնենք և ալս բանվորին ապահովելու  
խնդիրը՝ – ասաց Նաստիան:

Վոչ վոք չտռարկեց:

Արդեն լուսացել եր: Գործարանի  
սուլիչը՝ սովորականին հակառակ՝ յեր-  
կու-յերեք անգամ եր կանչել, բայց ի-  
զուր... տրամադրություն չկար... Մե-  
քենաները լուռ կանգնած ելին...

Շատ շանցած՝ գործադուլի ղեկա-  
վարները բաժանվեցին յերկու մասի.  
մեկը դիմեց գործարանի գրասենյակը՝  
բանակցելու, իսկ մյուսը՝ դեպի ապ-  
գործարաններ, նախապատրաստելու  
բանվորությանը և պետք յեղած դեպ-  
քում, համագործակցության հող պատ-  
րաստելու:

Գործարանի վարչությունը ծաղրով  
ու հեգնանքով ընդունեց առաջարկը և  
կտրականապես մերժեց: Բանվորները  
նրանց ծաղրին պատասխանեցին գոր-  
ծարանի այն սուլիչով, վոր միայն վը-  
տանդի դեպքում եր հնչում:

Գործարանատերը սարսափից փա-  
խել եր՝ հայանի չե՛ ուր:

Յերկար տեսեց գործադուլը, սակայն  
բանվորները համառ կերպով շարունա-  
կում ելին զիմանալ նրա սոսկալի հե-  
տեանքներին:

Նաստյան և մյուս ընկերները գիշեր-  
ցերեկ վառ ելին պահում գործադու-  
րավորների մեջ հաղթանակի հավատը,  
և մասամբ դրսի բանվորների աջակցու-  
թյամբ ոգնության հասնում անենա-  
կարիքավորներին:

Դժվար եր և՛ գործարանի վարչու-  
թյան դրությունը: Վեասները հասնում  
ելին տասնյակ հազարների, վորն ա-  
ճում եր որեցոր: Գործարանատերը հե-  
ռազբերով ոմբակոծում եր կառավար-  
չին, հայիոլում, վոր նա չի կարողա-  
նում «մի հարվածով սատկացնել այդ  
սոված շներին»...:

Վոստիկանությունը վախենում եր

խիստ միջոցների գիմել... Մթնոլորան  
ընդհանրապես թանձրացել եր և լցվել  
ոլալթուցիկ նյութերով, նրանք աշխա-  
տում ելին միայն, վոր հրդեհը չտա-  
րածվի...

Շատ չանցած գործարանի վարչու-  
թյունն սկսեց քիչ-քիչ զիջել...

Դարձալ մի քանի որ, և հաշտու-  
թյունը վերջնականապես կայացավ:  
Բանվորների ուրախությանը սահման  
չկար...

Սակայն հենց այդ միջոցին անհե-  
տացավ նաստյան... Ո՞ւր եր նա, վոչ  
վոք չգիտեր:

Սկզբում կարծեցինք, թե իրեն հա-  
տուկ վորհե հանդուգն գործի լե ձեռ-  
նարկել և թագնվում ե, բայց շատ  
չանցած լսեցինք, վոր նա մի քան  
ընկերների հետ ձերբակալված ե:

Բանվորները, վորոնք իրենց հաղ-  
թանակը հրաշք ելին համարում և դի-

տակցում բանտարկված ընկերների կատարած դերը, կայծակնահար լեղան:

Այս անդամ ալիս ղեկավար չեր հարկավոր .. նրանք իրենք հավաքվեցին դարձյալ նույն սրահը ու լերդվեցին կյանքի գնով ազատել բանտարկվածներին:

Վիճողներ չկային, այս անդամ հարցը պարզ եր և ամենքի սրտին մոտ:

Հետեւյալ առավոտը բանվորների ներկայացուցիչները դիմեցին գործարանի վարչությանը և պահանջեցին ազատել տալ բռնվածներին:

— Սա ձեր կեղտոտ ձեռների գործներ,—ասին բանվորները կառավարչին:

Սակայն այս անդամ նա չհեգնեց, չարտաքսեց նրանց, այլ ամենայն քաղաքավարությամբ ընդունելով՝ լսեց, կեղծ ցավակցական դեմքով, թե իրենք աեղեկություն, չունեն: Ապա խոստացավ «խնդրել ուժ հարկն ե», վոր «գուցե» ազատեն նրանց:

Բանվորներին խաբելն արդեն դըմ-  
վար եր: Նրանք հայտարարեցին, վոր  
թեն «հավատում են նրա յերդմանը,  
բայց և այնպես աշխատանքի չեն անց-  
նելու, մինչև չվերադառնան ընկեր-  
ները»:

Դժբախտաբար բանվորները չիմա-  
ցան, վոր իրենց այդ վորոշումը նաս-  
տիալի համար մահ և պատրաստում...

Բանվորներին ճանապարհ դնելուց  
հետո կառավարիչը կառք նստեց և  
գնաց քաղաք գաղտնի վոստիկանապետի  
մոտ՝ իր «խոստումը» կատարելու:

Ինչ խոսեցին այնտեղ, հայտնի չե,  
միայն կառավարիչը շատ գոհ վերա-  
դարձավ: Ճանապարհին նույնիսկ ինչ  
վոր յերգ եր մոմուռմ քթի տակ:

Վերադառնալով՝ նա մեզ հայտնեց,  
թե շուտով կազմակեն:

Բանվորները հավատարիմ իրենց վո-  
րոշմանը՝ գործի չելին անցնում, սպա-  
սում ելին...

Յերկու որ անց՝ կառավարիչը շատ  
տխուր դեմքով հայտնեց, վոր թեև  
ընկերներին ազատում են բանտից,  
բայց գժբախտաբար Նաստյան հիվան-  
դացել և մեռել է բանտում։

Բանվորների վրդովմունքը չտփ չու-  
ներ...

— Սուտ ե, սուտ, — զոռում ելին  
ամեն կողմից։

— Թող տան մեզ դիակը, յեթե  
ճիշտ ե։

Տեսնելով, վոր ճար չկա և խռովու-  
թյունը գնալով աճում ե, կառավարչի  
խնդրանոք՝ բանտի վարչությունն ու  
վոստիկանությունը խռոտացան տալ  
մեզ մեր սիրելի Նաստյալի դիակը պայ-  
մանով, վոր թաղենք առավոտյան շատ  
վաղ, յերբ դեռ քնած է քաղաքը։

Հետեւալ առավոտը բոլոր բանվոր-  
ներս հավաքված դիմեցինք դեպի բանտ։

Ներսից հնչում եր մահվան քայլերդի

մելամաղձոտ ձայնը։ Դա մեր բանտարկիաների լեզուն երի լեզուն եր, վորն ուղեկցում եր իր սիրելի ընկերոջը։

Դուքս բերին դագաղը. ընկերները կափարիչը բարձրացրին և... ո, սարսահի... դիակն ամբողջովին ծածկված եր կապտավուն ուռուցքներով—լեռեսը ծվատված եր, կոկորդի վրա կային նույն խոկ մարդկացին ատամի հետքեր...։

Պարզ եր, Նաստյալին զցել ելին քրեական բաժինը և հանձնել հարբած վոճագործների, մարդասպանների դատաստանին....։

Անզոր վոստիկանությունը վերջին ժամանակները հաճախ եր դիմում ալդմիջոցներին։

Տեսնելով ալդ, զայրութիւնի մի խոր մոնչյուն դուքս թռավ բոլորի կրծքից, կարծես լերկինքը փլեց... Բայց ինչ արած...։

Բոլորս պահ մի ծունկ խոնարհեցինք  
հերոս մարտիկի դագաղի առջե, ապա  
զնելով մեր ուսերին՝ առարանք դեպի  
գերեզմանատուն:

Լուս եցին բոլորը վողջ ճանապահին:  
Խօփում եր միայն ծովի ալիքները հու-  
զող քամու սուլոցը, <sup>ու</sup>վորը փըռփըռաց-  
նելով առջեից զնացող միակ կարմիր  
դրոշակը, ինչ-վոր մի առանձին խոր-  
հրդավորություն եր տալիս քաղաքա-  
ցիական այլ անդրանիկ թաղումին:

Դերեզմանատունը գտնվում եր բարձր  
բլրի վրա: Հասնելով այստեղ, ցած  
դրինք կարմիր դագաղը մռայլ փոսի  
առաջ... Ընկերներից մեկը թռուցիկ  
կերպով տվեց նրա կյանքի նկարագիրը,  
սակայն դա ավելորդ եր, վորովհետեւ  
Նաստյալին բոլորս գիտելինք:

Ընկերները լերգեցին «Դուք զո՞  
զնացիք» – և դագաղն իջեցրին գերեզ-  
ման:

Վերջին վայրկյանին բոլորս մի անհուն  
կարոտով նայեցինք նրան, կարծես  
սպասելով մի նոր գոտեպնդիչ խոսքի:  
Բայց նա լուռ եր... Հազիվ ելինք զըս-  
պում մեզ:

— Ընկերներ,—հանկարծ ղարձավ  
հուղարկավորներին մի յերիտասարդ  
բանվոր,—յեկեք յերդվենք այս թարմ  
գերեզմանի առաջ, վոր մենք հավա-  
տարիմ կմնանք նրա գաղափարներին  
և կշարունակենք նրա կիսատ գործը:

— Յերդվում ենք,—գոչեցին բոլորը  
միասին: Նրանց յերդման արձագանքը  
հնչեց վաղորդլան ջինջ ողում և գնաց  
հեռու, հեռո՞ւ...

Մինչ այդ, նոր ծագող արևի առաջին  
ճառագալիթն ընկել եր թարմ հողա-  
թմբին:

Բանվորները քաջալերված իրենց յերդ-  
մամբ՝ վերջին անգամ հայացք նե-  
տելով գերեզմանին, հեռացան:

~~Մնացինք յես ու Բերտան~~  
Արցունքը խոր կսկիծի հետ խնդրում  
եր կոկորդո, բայց զսպում ելի ինձ...  
իսկ նա գունատ, քարացած կանգնել  
եր, հայացքը հառած դեպի հեռվում  
ծփացող ծովը:

Վերջապես, սթափվելով, — գնանք —  
ասաց, նա, — անշուշտ հիմա մեզ հետեւ-  
վողներ կլինեն:

— Վոչի՞նչ, — ավելացրեց նա, — տես-  
նում ես այդ նոր ծագող արեր, վորի  
ճառ ագալթներն այնպես սիրալիր ա-  
ռաջին համբուլը տվին մեր սիրելի  
նաստյալին:

Իսչպես չի կարելի խանգարել նրա  
ծագելուն, այնպես ել այս հալածանք-  
ները չեն կարող կասեցնել այն աշխա-  
տանքը, վորն սկսված ե բանվոր դա-  
սակարգի աղատության համար։ Սա ա-  
ռաջինը չե և վոչ ել վերջինը կլինի,  
մեզ նման շատ շատերը պիտի ընկնեն  
դեռ այդ մեծ ճանապարհին։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0045131

(154.)  
Գիր 15 կոտ. Ա. ( $1\frac{1}{2}$  մ.)

A I  
861



---

Маро  
НАСТЯ  
Госиздат ССР Армении  
Эревань, 1929 г.

---